

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ վարչական դատարանին
քաղաք Երևան, Թբիլիսյան խճ. 3/9.

Հայցվոր՝ փաստաբան Արթուր Ղամբարյան
Հաշվառման հասցե՝ ք. Երևան, Ռուսթավելի 90.
Ճանուցման հասցե՝ Հայաստան, ք. Երևան, Մաշտոցի 1, բն. 21,
e-mail artur.ghambaryan@gmail.com

(անձը հաստատող փաստաթղթի տվյալներ՝ AK0644336, տրված՝ 25.10.2015 թվականին, 011-ի
կողմից, արտոնագիր թիվ՝ 1759)

Պատասխանող՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ
Հասցե՝ Հայաստան, 0010, ք.Երևան, Չաքյան փողոց 7-2 շենք

Բողոքի պատճենը՝ ՀՀ վարչական դատարանին
քաղաք Երևան, Գարեգին Նժդեհի 23.

Վերաքննիչ բողոք

ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/1073/05/19
գործով 22.02.2019թ. որոշումը վերացնելու վերաբերյալ

I. Գործի նախապատմությունը:

1) 31.01.2019թ. դիմել եմ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ հետևյալ խնդրանքով՝ 1) վերականգնել փաստաբանական գործունեության թիվ 1759 արտոնագրի գործողությունը: 2) տրամադրել արտոնագրի կրկնօրինակը: 3) ազատել վերապատրաստման դասերից՝ նկատի ունենալով, որ դասավանդում եմ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում:

2) ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը 06.02.2019թ. թիվ3/4-Ա որոշմամբ սահմանել է. «Փաստաբան Ա. Ղամբարյանը պարտավոր է 32 ամսվա ընթացքում իր հաշվին լրացուցիչ անցնել վերապատրաստման դասընթաց՝ 104 ակադեմիական ժամ ժամաքանակով (կասեցված յուրաքանչյուր ամսվա համար 2 ակադեմիական ժամ 52*2) ըստ ժամանակացույցի»:

3) ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 06.02.2019թ. թիվ3/4-Ա որոշման՝ «Վերապատրաստման դասընթացից ազատելու հարցի վերաբերյալ» բաժնում սահմանված է. «Փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ընթացակարգը ... կարգավորվում է Պալատի խորհրդի 18.12.2014թ. 35/8-լ որոշմամբ հաստատված՝ «Փաստաբանների վերապատրաստման կարգի» դրույթներով: Այդ կարգի 16-րդ կետի համաձայն՝ արտոնագիրը վերականգնած փաստաբանը պարտավոր է իր հաշվին լրացուցիչ անցնել վերապատրաստման դասընթացներ՝ կասեցված յուրաքանչյուր ամսվա համար 2 ժամ ժամաքանակով: Դասընթացներ անցնելու ժամանակաշրջանը սահմանում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը:

4) 18.02.2019 թվականին հայցադիմում եմ ներկայացրել Դատարան (ստացվել է 19.02.2019 թվականին) ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետև՝ Պալատ) Պալատի խորհրդի 06.02.2019 թվականի թիվ 3/4-Ա որոշման 4-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասին, այն պատճառաբանությամբ, որ խորհրդը, վիճարկվող իրավական ակտում հայցվորի՝ վերապատրաստում անցնելու պարտականությունը՝ «լրացուցիչ վերապատրաստում» ձևակերպմամբ ձևախեղելով և կարգապահական խախտում թույլ տված փաստաբանի և արտոնագիրը վերականգնած փաստաբանի համար լրացուցիչ վերապատրաստման միասնական կարգ սահմանելով, խաթարել է բարեխիղճ փաստաբանի պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը: Բանն այն է, որ Օրենքով **լրացուցիչ վերապատրաստում անցնելը** դիտվում է **բացառապես** որպես կարգապահական տույժ, որը նշանակվում է կարգապահական խախտում թույլ տված փաստաբանի նկատմամբ:

5) Հայցադիմումի կառուցվածքում նախատեսված է եղել **«IV. Փաստաբանական պալատի խորհրդի անհատական ակտը վիճարկելու վերաբերյալ գործերի ընդհատության խնդիրը»** վերտառությամբ բաժին:

6) ՀՀ վարչական դատարանը, ղեկավարվելով, մասնավորապես, ՀՀ վարչ. դատ. օր-ի 81-րդ հոդվածով և 127-րդ հոդվածի 10-րդ մասով, 22.02.2019թ. որոշում է կայացրել հայցն ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրելու մասին, որը իրապարակման պահից մտել է օրինական ուժի մեջ:

II. Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները:

Սույն գործով ՀՀ վարչական դատարանը 22.02.2019թ. որոշմամբ՝ «Պալատ-փաստաբան» հարաբերությունների հանրային իրավահարաբերությունների բնույթը բացառել է զուտ այն պատճառաբանությամբ, որ.

«Հայցվորի պահանջն ուղղված է Պալատի դեմ, որը չի հանդիսանում որպես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով անձին իրավունք է տրված դիմելու ՀՀ վարչական դատարան այն դեպքում, երբ նրա իրավունքները կամ ազատությունները խախտվել կամ դրա վտանգն է ստեղծվել պետական, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից, որպիսի սուբյեկտն էլ սույն գործով հայցվորի կողմից ներկայացված հայցի շրջանակներում բացակայում է, ինչն էլ բացառում է վերջինիս հարուցած վեճի՝ հանրային իրավահարաբերություններից բխելու հանգամանքը: Այսինքն՝ Դատարանը հաստատված է համարում, որ սույն վեճի կողմերից որևէ մեկը չի հանդիսանում հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, ուստի վեճով իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, և այդ իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ, որպիսի տարրերի բացակայությունը բացառում է վեճի՝ հանրային իրավահարաբերություններից բխելու և ՀՀ վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը»:

Դատարանը սույն գործով հայցվորի և Պալատի իրավահարաբերությունների հանրային բնույթի բացակայությունը հիմնավորել է երկու ընդհանրական չափանիշի վկայակոչմամբ՝

1) այդ իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ.

2) կողմերից որևէ մեկը չի հանդիսանում հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ:

Նախ՝ ՀՀ վարչական դատարանը նշել է, որ այդ իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ: Ենթադրենք, որ խոսքը հայցվորի վերապատրաստման իրավահարաբերությունների մասին է, ապա դատավորի տրամաբանությամբ՝ փաստաբանի վերապատրաստումը ոչ թե հանրային շահ է հետապնդում, այլ մասնավոր: Նման սխալ դատողություններից խուսափելու համար, առնվազն դատարանը պետք էր խորությամբ ուսումնասիրեր փաստաբանության սոցիալ-իրավական բնույթը, որի պայմաններում մի գուցե ընկալելի կլիներ փաստաբանի վերապատրաստման ոլորտում հանրային շահի առկայությունը:

ՄԼԿ-ի 1990թ. «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»-ի մասին փաստաթղթի 12-րդ կետում՝ իրավաբանները բնորոշվում են որպես արդարադատության իրականացման բնագավառի պատասխանատու աշխատողներ: Նույն փաստաթղթի 9-րդ կետի համաձայն. «Կառավարությունները, իրավաբանների արհեստակցական միավորումները և ուսումնական հաստատություններն ապահովում են իրավաբանների պատշաճ որակավորումն ու պատրաստումը և նրանց կողմից մասնագիտական իդեալների ու բարոյական պարտականությունների, ինչպես նաև ազգային և միջազգային իրավունքով ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իմացությունը»:

Իրավաբանների միջազգային ասոցիացիայի կողմից 1995թ. հաստատված «Փաստաբանների էթիկայի ընդհանուր սկզբունքներ»-ում (Շոտլանդիա) նշված է, որ աշխարհի բոլոր փաստաբանները մասնագիտացված պրոֆեսիոնալներ են, ովքեր իրենց հաճախորդների շահերն ավելի բարձր են դասում, քան սեփական շահերը և ձգտում են հարգանք պահպանել իրավական պետության հանդեպ: Նրանք զուգակցում են իրավական գիտելիքներ մշտական բարձրացումը իրենց հաճախորդներին իրավաբանական օգնություն ցույց տալու, դատարանի նկատմամբ հարգանքի հետ:

«Եվրոպական միության փաստաբանների վարքագծի կանոններում»¹ 1.1 կետում (փաստաբանների գործառույթ հասարակությունում) նշված է. «Իրավական նորմերի նկատմամբ հարգանքի վրա հիմնված հասարակությունում փաստաբանը ունի հատուկ դերակատարություն: ... Փաստաբանը պետք է ծառայի արդարադատության շահերին, ինչպես նաև այն անձանց շահերին, ովքեր վստահել են իրենց իրավունքների պաշտպանությունը»:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. Rec (2000) 21 հանձնարարականի համաձայն՝ 2-րդ սկզբունքում ամրագրված են փաստաբանների կրթության, վերապատրաստման անհրաժեշտության մասին դրույթներ:

Վերը նշված միջազգային փաստաթղթերից հստակ տեսանելի է, որ՝ փաստաբանությունը դիտարկվում է հասարակական հատուկ նշանակություն ունեցող գործունեություն, իսկ փաստաբանները՝ արդարադատության իրականացման բնագավառի պատասխանատու աշխատողներ, որոնց մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացումը ոչ թե կոնկրետ փաստաբանի մասնավոր խնդիրն է, այլև դա հասարակական պահանջ է: Ողջ հանրությունն է հետաքրքրված, որ արդարադատության ոլորտում ներգրավված մասնագետները՝ անկախ նրանից պետական են, թե ոչ, ունենան մասնագիտական բարձր որակներ, և հենց այդ պատճառով է, որ օրենսդիրը վերապատրաստմանը մասնակցելը դիտել է որպես դատավորի, դատախազի, քննիչի, փաստաբանի պարտականություն, որի չկատարելն առաջացնում է իրավական հետևանքներ: Չեմ

¹ Ընդունվել է 28.10.1988թ. Եվրոպական միության փաստաբանների ու իրավաբանների միությունների խորհրդի կողմից:

կարծում՝ որևէ մեկը կասկածի տակ դի, օրինակ՝ դատավորի վերապատրաստման հարաբերությունների հանրային շահի կապակցությամբ ծագելու հանգամանքը:

Պետությունը՝ որպես մարդու հիմնական իրավունքների հասցեատեր, պարտավոր է ապահովել հասարակության անդամների որակյալ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքը: ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՌ-1263 որոշմամբ դատարանը նշել է.

«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես **որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը**»:

Որակյալ իրավաբանական օգնություն ապահովելու հանրային շահով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետությունը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսել է փաստաբանի վերապատրաստում անցնելու պարտականություն, սակայն, ելնելով փաստաբանության անկախության սկզբունքից, հանրային նշանակության այս գործառնություն իրականացումը վերալիազորել է փաստաբանական մարմիններին:

Եթե հիմք ընդունենք, որ վերապատրաստման կապակցությամբ իրավահարաբերությունները ծագում են ոչ թե հանրային, այլ մասնավոր շահի իրացման կապակցությամբ, ապա դա նշանակում է, որ փաստաբանը կարող է հրաժարվել իր մասնավոր շահի բավարարումից: ՀՀ վարչական դատարանը, բացառելով փաստաբանի վերապատրաստման հարաբերությունների կապը հանրային շահի հետ, ակամայից կասկածի տակ է դրել փաստաբանի կողմից վերապատրաստում անցնելու՝ օրենքով նախատեսված **պարտականության** սահմանադրական իրավաչափությունը:

Երկրորդ՝ դատական ակտում «Պալատ-փաստաբան» հարաբերությունների հանրային բնույթը բացառող հանգամանքի մասին որևէ այլ հիմնավոր վերլուծություն և/կամ առարկայական դատողություն արված չէ, այն հիմնված է առավելագույնը՝ ՀՀ վարչ. դատ. օր-ի 3-րդ հոդվածի վրա: ՀՀ վարչ. դատ. օր-ի 3-րդ հոդվածը ինքնին չի բացառում ֆորմալ իրավաբանական իմաստով վարչական մարմին չհանդիսացող, սակայն հանրային գործառնություններ իրականացնող (վարչարարություն իրականացնող) անձի հետ հանրային իրավահարաբերությունների առկայությունը: Ապացուցման կարիք չունեցող այս պարզ կամ պարզունակ ճշմարտությունը «ապացուցելու» համար հարկադրված են վերլուծել ՀՀ իրավակիրառ պրակտիկան և դոկտրինալ աղբյուրները՝ դիմելով իրավահամեմատական մեթոդին:

1. ՀՀ վարչ. դատ. օր-ի 3-րդ հոդվածի ոչ իրավաչափ «մեկնաբանության» հաղթահարումը և իրավաբանական անձանց (ծառայողներին) որպես վարչական պատասխանող ճանաչելու ՀՀ-ում առկա պրակտիկան

(a) ՀՀ վարչ. դատ. օր-ի 3-րդ հոդվածը և Կենտրոնական բանկը (իրավաբանական անձը) վարչական գործով պատասխանող: ՀՀ վճռաբեկ դատարանը 2007թ. թիվ 3-1886(ՏԴ) Քաղաքացիական գործով Կենտրոնական բանկի ներկայացուցիչը հայտարարել է, որ Կենտրոնական բանկը պետական մարմին չէ և չի իրականացնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված վարչարարություն: ՀՀ վճռաբեկ դատարանը համաձայնվել է Տնտեսական դատարանի հետևյալ դիրքորոշման հետ.

«Պատասխանողի ներկայացուցիչների պնդումներն այն մասին, որ ՀՀ կենտրոնական բանկը պետական մարմին չէ, այլ «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական գործառնություններով օժտված իրավաբանական անձ, և այդ իսկ պատճառով չի իրականացնում վարչարարություն, անհիմն են. պատասխանողը բանկային գործունեության բնագավառում իրականացնում է պետական քաղաքականություն, ուստի, հանդիսանում է վարչական մարմին և վերջինիս կողմից որոշում ընդունելը, այսինքն՝ վարչական ակտ ընդունելու ենթակա են կիրառման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերը»:

Այսինքն՝ ՀՀ տնտեսական դատարանն անդրադարձել է Կենտրոնական բանկի հարցադրմանը և հաստատել Կենտրոնական բանկի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառելիության հանգամանքը:

«Datalex» տեղեկատվական համակարգի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 24.02.2018թ. դրությամբ ՀՀ կենտրոնական բանկը մոտ 30 վարչական գործով հանդես է եկել որպես պատասխանող:

Այսպիսով՝ թեև «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով Կենտրոնական բանկը որակվում է որպես իրավաբանական անձ, սակայն ՀՀ վարչ. դատ. օր-ի 3-րդ հոդվածը չի խոչընդոտել որպեսզի պետական գործառնություններ իրականացնող իրավաբանական անձը վարչական դատավարությունում հանդես գա որպես պատասխանող:

(b) ՀՀ վարչ. դատ. օր-ի 3-րդ հոդվածը և նոտարը (ոչ պետական ծառայողը) ու նոտարական պալատը (մասնագիտական ոչ առևտրային կազմակերպությունը) վարչական գործով պատասխանող

(1) *Ընդհանուր բնութագիրը:* «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է՝ 2001թ. դեկտեմբերի 4-ին) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը **Հայաստանի Հանրապետության անունից**, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է այդ օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ, այդ թվում՝ փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր տրամադրելու միջոցով:

ՀՀ վարչ. դատ. օր-ի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին ընդդատյա են՝ 1) նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը: 2) նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը»:

(2) ՀՀ *սահմանադրական դատարանը նոտարի հանրային գործառնությունների մասին:* ՀՀ սահմանադրական դատարանը 10.05.2016թ. ՄԴՈ-1271 որոշմամբ նշել է.

«Նոտարը, վավերացնելով փաստաթուղթը, «Հայաստանի Հանրապետության անունից» հաստատում է դրա օրինականությունը և հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը: Նրա նոտարագրությամբ ու կնիքով վավերացված կամ հաստատված փաստաթուղթն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ: Օրենսդիր հանրային իշխանությանը բնորոշ որոշ գործառնությունների իրականացումը պատվիրակել է նոտարին»:

ՀՀ սահմանադրական դատարանը հանրային իշխանության որոշ գործառնությունները ոչ պետական սուբյեկտներին փոխանցելը, փաստացի նաև ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի տեսանկյունից, համարել է թույլատրելի: Ընդ որում ՀՀ սահմանադրական դատարանը նշել է. «Սահմանադրական դատարանը կարևորում է այնպիսի իրավակարգավորումների անհրաժեշտությունը, որոնց շրջանակներում իր որոշ վարչական լիազորություններ մասնավոր անձանց փոխանցելու միջոցով պետությունը չի կարող հրաժարվել այդ լիազորությունների ոչ արդյունավետ իրականացման համար պատասխանատվությունից»:

(3) ՀՀ *վճարելի դատարանը նոտարի հանրային գործառնությունների մասին:* ՀՀ վճարելի դատարանի 13.05.2015թ. թիվ ՎԴ/5014/05/09 վարչական գործով քննարկել է նոտարի գործառնությունների հանրային և մասնավոր բնույթի հարցը: Թեև նոտարը պետական պաշտոնատար անձ չէ, սակայն ՀՀ վճարելի դատարանը իրավացիորեն ընդունել է, որ որոշ դեպքերում նոտարը իրականացնում է հանրային գործառնություններ: Սույն գործի լուծման տեսանկյունից կարևոր ենք համարում ՀՀ վճարելի դատարանի կողմից նշված այն չափանիշները, որի հիման վրա որոշվել է ոչ պետական ինստիտուտի գործառնությունների հանրային բնույթ լինել-չլինելու հարցը: Այսպես՝ ՀՀ վճարելի դատարանը նշել է. «Առաջին՝ նոտարի գործունեության նպատակը ոչ թե նոտարի շահերն են, այլ՝ հանրության շահերը: Այսինքն՝ ՀՀ նոտարներն իրականացնում են հանրային նշանակության գործառնություններ, որոնք սահմանվում են օրենքով: Երկրորդ՝ նոտարները, ինչպես պետական մարմինները և պաշտոնատար անձինք, իրենց գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են ոչ թե մասնավոր անձանց ներհատուկ կամքի ազատ արտահայտմամբ, այլ գործում են հանրային իշխանությանը ներհատուկ ընթացակարգերի շրջանակներում: Երրորդ՝ նոտարները նշանակվում են պաշտոնատար անձանց համար օրենքով հատուկ սահմանված կարգով: Չորրորդ՝ նոտարները կարգապահական պատասխանատվության են ենթարկվում, նրանց լիազորությունները դադարում են նույնպես օրենքով սահմանված հատուկ հիմքերի առկայության պայմաններում և հատուկ կարգով: Այսինքն՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը ՀՀ-ի անունից, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ: Միաժամանակ, նոտարը մի շարք իրավահարաբերություններում հանդես է գալիս նաև որպես անհատ ձեռնարկատեր ...: Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ նոտարի իրավական կարգավիճակը ՀՀ-ում ունի երկակի՝ հանրային-իրավական և մասնավոր-իրավական բնույթ: Ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարն իրականացնում է հանրային գործառնություն, քանի որ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարի և քաղաքացու միջև առկա են ոչ թե կոորդինացիոն (համադասություն) բնույթի, այլ սուբորդինացիոն (ենթակայություն) բնույթի իրավահարաբերություններ:

(4) ՀՀ *վճարելի դատարանը նոտարական պալատի՝ որպես վարչական դատարանում պատասխանող հանդես գալու մասին:* «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարական պալատն ինքնակառավարման սկզբունքի և նոտարների պարտադիր անդամակցության վրա հիմնված՝ նոտարների մասնագիտական ոչ առևտրային կազմակերպություն է: Նոտարական պալատն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, նույն օրենքին, այլ օրենքներին և իրավական ակտերին և իր կանոնադրությունը համապատասխան:

ՀՀ վճարելի դատարանի 13.05.2015թ. թիվ ՎԴ/5014/05/09 վարչական գործով նշել է.

«Նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցապահանջի քննության շրջանակներում ՀՀ նոտարական պալատն իրավասու է դատարանում ներկայացնել և պաշտպանելու իր գրադեցրած պաշտոնից ազատված կամ լիազորությունները դադարած նոտարի շահերը, քանի որ նշված հայցապահանջներով վիճարկվում է նոտարի՝ հանրային-իրավական կարգավիճակից բխող գործողությունների իրավաչափությունը: Հետևաբար նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործի քննության ընթացքում նոտարի՝ իր գրադեցրած պաշտոնից ազատվելու կամ լիազորությունների դադարման դեպքում նոտարի դեմ ներկայացված՝ նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու հայցապահանջների մասով վարչական դատարանը պարտավոր է իր

զբաղեցրած պաշտոնից ազատված կամ լիազորությունները դադարած նոտարին ՀՀ վարչական դատավարության կարգով փոխարինել պատշաճ պատասխանողով՝ ՀՀ նոտարական պալատով»:

(c) ՀՀ փաստաբանների պալատի և փաստաբանների հանրային իրավաբանությունների առկայությունը

(1) Փաստաբանների պալատի գործունեության խնդիրները: Փաստաբանությունը իրավապաշտպան գործունեություն իրականացնող սոցիալ-հանրային ինստիտուտ է, որը կոչված է իրավաբանական օգնություն ցույց տալ ֆիզիկական և իրավաբանական անձանց²: Փաստաբանների պալատի գործունեության հանրային բնույթը արտացոլվում է նրա խնդիրներում: Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ 1) պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում: 2) կազմակերպել փաստաբանների արտոնագրման գործընթացը: 3) կազմակերպել փաստաբանի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը և փաստաբանների վերապատրաստումը: 4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնադրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ: 5) միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ: 6) սույն օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես ապահովել մատչելի և արդյունավետ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը: 7) նպաստել հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված): Այս խնդիրներն ակնհայտորեն վկայում են Պալատի գործունեության հանրային նպատակների մասին:

(2) Փաստաբանների պալատի ձևավորման կարգը: Ի տարբերություն մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց, ովքեր հիմնադրվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից, Պալատը ստեղծվում է օրենքի հիման վրա (տե՛ս Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մաս), ինչը նշանակում է, որ Պալատը, ինչպես և մյուս պետական մարմինները, հիմնադրվել են պետության կողմից: Առանձին պետական մարմիններ նույնպես ստեղծվում են օրենքի հիման վրա (տե՛ս «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված):

Պալատի մարմինների ձևավորման կարգը սահմանվում է ոչ թե մասնավոր իրավունքի նորմերով, այլ «Փաստաբանության մասին» հատուկ օրենքով:

Պետությունը, ՀՀ փաստաբանների պալատի գործունեությունն աջակցելու նպատակով, նրան անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել է անշարժ գույք (ՀՀ կառավարության թիվ 1540 – Ա որոշումը):

(3) Փաստաբանների պալատի անդամակցության հարցում փաստաբանի կամքի ազատությունը: Ի տարբերություն մասնավոր կազմակերպությունների, որոնց անդամակցությունը հիմնված է կամավորության սկզբունքի վրա, փաստաբանների պարագայում Պալատին անդամակցելը պարտադիր է: Իրավաբանը կարող է իրականացնել փաստաբանական գործունեություն բացառապես Պալատի անդամ լինելու դեպքում (արտոնագրվելու դեպքում):

(4) «Պալատ-փաստաբան» հարաբերություններում մասնավոր պայմանագրի բացակայությունը և Պալատի միակողմանի հանրային գործողությունները: «Պալատ-փաստաբան» հարաբերությունների հանրային իրավական բնույթի մասին է վկայում մի կողմից՝ նրանց միջև մասնավոր գործարքի (պայմանագրի) բացակայությունը, մյուս կողմից՝ վարչաիրավական, վերահսկողական բնույթի հարաբերությունների առկայությունը: Պալատը իրավասու է փաստաբանների համար սահմանել պարտադիր կատարման ենթակա ներքին իրավական ակտեր, Պալատի մարմինները իրավասու են փաստաբանի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ: Ավելին, արտոնագրման գործընթացի կազմակերպումը դասական հանրային իշխանական գործառույթ է, որը պետությունը, ելնելով փաստաբանների անկախության ապահովման նպատակից, պատվիրակել է Պալատին: Այլ կերպ ասած՝ Պալատի գործառույթների մի զգալի մասը պետական գործառույթներ են:

(5) «Պալատ-փաստաբան» վարչաիրավական փոխհարաբերությունները «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից: «Պալատ-փաստաբան» փոխհարաբերությունների վարչաիրավական բնույթը հիմնավորելու նպատակով կներկայացնեմ նաև մեկ ֆորմալ-իրավաբանական փաստարկ: «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում հստակ սահմանված է, որ ներքին ակտ կարելի է ընդունել միայն անձանց խմբի համար, ովքեր ընդունող մարմնի հետ՝ 1) աշխատանքային հարաբերությունների մեջ են, կամ 2) վարչական հարաբերությունների մեջ են, կամ 3) օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից: Պալատը փաստաբանների համար ընդունում է պարտադիր կատարման ենթակա ներքին ակտեր: Նման դեպքում հարց է ծագում, Պալատի ներքին ակտերը ինչ հարաբերությունների շրջանակներում է տարածվում փաստաբանների նկատմամբ: Կարծում եմ ողջամտությունը պահանջում է բացառել, որ «Պալատ-փաստաբան» հարաբերությունները աշխատանքային են կամ ծառայություններից օգտվելու շրջանակում են: Եթե ընդունում ենք, որ այս հարաբերությունները վարչական են, ապա դրանցից բխող վեճերը պետք է քննել վարչական

² ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները: Պատգիբը ԲՈՒՅ-ի համար: Երևան, ԵՊՅ հրատ., 2007, էջ 418:

դատավարության կարգով, իսկ եթե մերժում ենք, այդ հարաբերությունների վարչական բնույթը, ապա ստացվում է, որ Պալատը իրավասու չէ փաստաբանների համար սահմանել ներքին իրավական ակտեր:

(d) Ոչ պետական մարմիններին վարչարարության սուբյեկտ ճանաչելու և նրանց ակտերը վարչական արդարադատության կարգով վիճարկելու օրինական ակնկալիքը և վստահության պաշտպանության սկզբունքի խախտումը: ՀՀ-ում 2012թ. իրականացվող իրավական բարեփոխումների շրջանակում առկա է եղել հստակ պետական կամք այն մասին, որ ոչ պետական մարմինները պետք է համարվեն վարչական մարմին, ուստի նրանց ակտերի դեմ բողոքները պետք է լուծել վարչական դատավարության կարգով: ՀՀ-ի հետևողականորեն իրականացվող քաղաքականության արդյունքում ձևավորվել է այն օրինական ակնկալիքը, ըստ որի Փաստաբանների պալատը պետք է համարվի վարչարարություն իրականացնող մարմին, իսկ նրա ակտերը պետք է վիճարկել վարչական դատավարության կարգով:

Պալատի հանրային իրավական ակտերն վարչական արդարադատության կարգով լուծելու օրինական ակնկալիքը ձևավորվել է հետևյալ փաստերի վրա:

(1) Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի 5.2-րդ կետում նախատեսված էր հետևյալ միջոցառումները.

«Վարչական վարույթի շրջանակներում «վարչական մարմին» հասկացության մեջ ներառել այն մասնավոր սուբյեկտներին, որոնց պետությունը վերապահել է հանրային գործառնությունը՝ ապահովելով նաև այդ սուբյեկտների որոշումներից, գործողություններից և անգործությունից մասնավոր անձանց դատական պաշտպանությունը. Փոփոխություններ կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և (ըստ անհրաժեշտության) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում: «Վարչական մարմին» հասկացությունը չի կարող ներառել միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, քանի որ կան այնպիսի սուբյեկտներ, որոնք, չհանդիսանալով պետական մարմիններ, իրականացնում են պետության կողմից վերապահված հանրային գործառնություններ: Անհրաժեշտ է վարչական մարմնի ֆունկցիոնալ հասկացության մեջ ներառել նաև այդ սուբյեկտներին: Դրանով անձանց հնարավորություն կտրվի բողոքարկել նաև այդ սուբյեկտների որոշումներն ու գործողությունները»³:

(2) Ի կատարումն նշված միջոցառման ՀՀ կառավարությունը շրջանառության մեջ է դրել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-902-24.11.2015-ՊԻ-010/0) օրենքի նախագիծը: Նախագծի հիմնավորման մեջ նշվում է.

«Ներկայումս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններ են հանդիսանում ՀՀ գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները, մասնավորապես՝ ՀՀ նախարարությունները, Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները, մարզպետները, համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը: Միաժամանակ, նույն հոդվածով սահմանվում է, որ եթե թվարկված մարմիններից բացի վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ: Մինչդեռ՝ «Վարչական մարմին» հասկացությունը չի կարող ներառել միայն տվյալ հոդվածում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, քանի որ կան նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերապահվել է վարչարարություն իրականացնելու լիազորություններ: Ուստի անհրաժեշտ է վարչական մարմնի հասկացության մեջ ներառել նաև այդ սուբյեկտներին՝ անձանց հնարավորություն տալով բողոքարկել նաև այդ սուբյեկտների որոշումներն ու գործողությունները»⁴:

(3) ՀՀ սահմանադրական դատարանը 10.05.2016թ. ՄԴՈ-1271 որոշմամբ նշել է. «Նոտարիատի մասին» առանձին օրենքով օրենսդիրը կարգավորել է նոտարների գործունեությունը, հետևաբար՝ վարչական մարմինների ցանկում նոտարներին չընդգրկելն **օրենսդրական բաց** համարվել չի կարող: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի չէ նոտարների նկատմամբ, այն վերաբերում է միայն վարչարարություն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց գործունեության իրավական հիմքերն այլ են:

Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունել նաև, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է գտնվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-902-24.11.2015-ՊԻ-010/0) օրենսդրական նախաձեռնություն: Նախագծի հիմնավորումներում նշվում է, որ «վարչական մարմին» հասկացությունը չի կարող ներառել միայն տվյալ հոդվածում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, քանի որ կան նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, չհանդիսացող այլ մարմիններ և անձինք, որոնց օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերապահվել է վարչարարություն իրականացնելու լիազորություններ»:

(4) ՀՀ Ազգային ժողովի պետաիրավական հանձնաժողովում 05.09.2017թ. քննարկվել է վերո նշված օրենքի նախագիծը, որով անկանխատեսելիորեն մերժվել է ոչ պետական ինստիտուտների կողմից

³ Հաստատվել է 33 նախագահի 30 հուլիսի 2012 թ. ՆԿ-96-Ա կարգադրությամբ:
⁴ Կ-902-24.11.2015-ՊԻ-010/0 <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=7850&Reading=0>

վարչարարություն իրականացնելու օրենսդրական նախագիծը⁵ : Հանձնաժողովի քննարկման ժամանակ վերանայվել է այն մտտեցումը, որ ոչ պետական մարմինը կարող է լինել վարչական մարմին: Պետաիրավական հանձնաժողովի նիստի քննարկման ժամանակ հնչեցվել է այն մտտեցումը, որ ոչ պետական մարմինը կարող է իրականացնել վարչարարություն, սակայն չի կարող համարվել վարչական մարմին: Քննարկման ժամանակ հատուկ բարձրացվել է նաև Փաստաբանների Պալատի հարցը, որի կապակցությամբ Հանձնաժողովի նախագահին հայտնել է, որ այդ հարցին կանդիդատան «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու դեպքում⁶: Առայսօր ֆորմալ-իրավաբանական առումով լուծված չէ այն օրինական ակնկալիքը, ըստ որի վարչական մարմին չհամարվում սուբյեկտները, այդ թվում Պալատը իրականացնում են վարչարարություն, իսկ նրա հանրային իրավական ակտերը կարող են վիճարկվել մասնագիտացված դատարանում:

Այսպիսով պետության ոչ հետևողական և անկանխատեսելի քաղաքականության հետևանքով չի իրացվել ոչ պետական մարմնի վարչարարության ակտերը վարչական դատարանում վիճարկելու օրինական ակնկալիքը:

2. Փաստաբանական միությունների՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասնակցությունը վարչական դատավարությանը (իրավահամեմատական վերլուծություն)

(a) Փաստաբանների միության՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի մասնակցությունը եվրոպական երկրների վարչական դատավարությանը

(1) *Նիդերլանդների Թագավորության իրավունքը*: Նիդերլանդների Փաստաբանների Միությունը հանրային իրավունքի իրավաբանական անձ է, որի անդամները Նիդերլանդների բոլոր փաստաբաններն են⁷ : «Փաստաբանների մասին» 1952թ. Ակտի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանների միություն ընդունված բոլոր փաստաբանները Նիդերլանդների Փաստաբանների Միության անդամներ են: Նրա գլխավոր գրասենյակը Հաագայում է և **նա հանդիսանում է հանրային իրավունքի կազմակերպությունը**, ինչպես որ սահմանված է Սահմանադրության 134-րդ հոդվածում:

Նիդերլանդների Սահմանադրության 134-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է. «Մասնագիտական և ձեռնարկատիրական գործունեության հարցերը կարգավորելու համար պետական մարմինները, ինչպես նաև այլ պետական մարմինները կարող են ստեղծվել և լուծարվել Պառլամենտի ակտով կամ Պառլամենտի ակտին համապատասխան»⁸ : Ինչպես նկատում ենք հոդվածում խոսվում է մասնագիտական գործունեության հարցերը կարգավորելու համար **պետական մարմին** ստեղծելու մասին: Տվյալ դեպքում Սահմանադրության տեսանկյունից Նիդերլանդների Փաստաբանների Միությունը հավասարեցվում է պետական մարմնի հետ կամ համարվում է պետական մարմին:

(2) *Ֆրանսիական իրավունքը*: Ֆրանսիական վարչական իրավունքի մասնագետները նշում են. «Ֆրանսիայում փաստաբանների միությունը դիտվում է որպես ազատ մասնագիտության անձանց միություն, որը կորպորատիվ կազմակերպություններ է: Այս կազմակերպությունները կառավարվում են ընտրովի խորհուրդների կողմից և ենթակա են վարչական դատարանի դատական վերահսկողությանը: Վերջինս քննում է Խորհուրդների որոշումների կամ ապօրինի գործողությունների դեմ բերված բողոքները, եթե խոսքը նրանց կողմից կայացված դատական բնույթի որոշումների մասին է: Ազատ մասնագիտության անձանց միությունները, անկասկած, **հանրային իրավունքին ենթակա հիմնարկներ են (ընդգծումը՝ Ա.Գ.)**: Դա առաջին հերթին վերաբերում է այդ միավորումների կողմից իրականացվող հանրային ծառայությանը, որը բխում է Բուզանի գործով Պետական խորհրդի դիրքորոշումից: Պետական խորհուրդը ճանաչել է, որ բժիշկների միության Բարձրագույն խորհրդի՝ սլավ կազմակերպությանն աղանակագրվելու մասին որոշման նկատմամբ դատական վերահսկողությունը, քանի որ «օրենսդիրը նկատի է ունեցել կազմակերպությունը և բժշկական մասնագիտության իրականացման նկատմամբ վերահսկողությունը դարձնել հանրային ծառայություն»: Ճանաչելով միավորումների իրավասությունների հանրային իրավական բնույթը, և հատկապես մասնագիտություն իրականացնելու մասնակցության վերաբերյալ գործադիր որոշումներ ընդունելու իրավունքը, ինչպես նաև ճանաչելով նրանց սահմանափակ կանոնակարգային իշխանությունը, այս միավորումները ենթակա են հանրային իրավունքին: Հետևապես, բնական է, որ վարչական դատարանն այդ մարմինների վարչական կամ դատական բնույթի որոշումների վերաբերյալ կարող է ընդունել եզրակացություններ: Այս կազմակերպությունների գործունեության որոշ ասպեկտներ ենթարկվում են մասնավոր իրավունքին⁹:

(3) *Գերմանական իրավունքը*: «Դաշնային օրենքը փաստաբանության մասին»¹⁰ §176 համաձայն՝ Դաշնային փաստաբանական պալատը համարվում է հանրային իրավունքի մարմին: Այստեղ խոսքը

⁵ Բանն այն է, որ «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը» մշակելիս ՀՀ արդարադատության նախարար է եղել Հ. Թովմասյանը (2010 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև 2014 թվականի ապրիլի 30-ը), ով 2017թ. ՀՀ ԱԿ-ում, որպես ԱԿ պետաիրավական հանձնաժողովի նախագահ, վարչարարություն իրականացնող մասնավոր անձանց վարչական մարմին համարելու նախագծի վերաբերյալ ներկայացրել է առաջարկություն: Ընդ որում, առաջարկության իրենցում որվել է առաջնություն այն փաստարկը, ըստ որի՝ 2015թ. Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ նախադասությունը թույլ չի տալիս անտուգանքով որ իշխանական լիազորություններ պատվիրակել ոչ պետական մարմիններին (բացի ՏԻՄ): Նախ՝ 2005թ. ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածն ունեցել է բազալիորեն նույն խմբավորությունը, ուստի սահմանադրական բարեփոխումները՝ սույն հարցում պետության քաղաքականության նախ կարող փոփոխության բավարար հիմք չեն: Բացի այդ, եթե ընդունվում ենք, այն որ պետությունը չի կարող իշխանական լիազորությունները վերախաղաղել ոչ պետական մարմիններին, ապա դա նշանակում է, որ ներկայումս Պալատի՝ օրենքով նախատեսված իշխանական լիազորություններն ամրագրող օրենսդրական նորմերը առերևույթ հակասահմանադրական են, և դրանք պետության կողմից պետք է փոփոխվեն: <https://www.youtube.com/watch?v=SJRmDHsWAYw> 2.04 –ից մինչև 2.21.

⁶ <https://www.youtube.com/watch?v=SJRmDHsWAYw> 2.04 –ից մինչև 2.21.

⁷ Юридическая профессия в Нидерландах = Legal profession in the Netherlands: Сборник документов / Legal Studies. RU; Составители и научные редакторы И.В. Калинин и А.В. Хвошинский. – М.: Институт права и публичной политики, 2010. С. 12.

⁸ http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/const/nethrld/holand-r.htm

⁹ Вельд Ж. Административное право Франции / перевод с французского доктора юрид. наук Энтина Л.М.; Под редакцией доктора наук Крутоголова М.А. М.: 1973. 460-462.

¹⁰ Bundesrechtsanwaltsordnung (01.07.2018 թվականի դրությամբ)

վերաբերում է՝ հանրային իրավունքի ներքո գտնվող իրավաբանական անձին, պետական կազմակերպության հատուկ կազմակերպարարական ձևին: Այսպիսով՝ իրավունակ, անդամակցության¹¹ վրա հիմնված կառուցվածքային կազմակերպություն, որն իրականացնում է հանրային առաջադրանքներ պետական միջոցներով՝ պետական վերահսկողության ներքո¹²:

Նույն օրենքի § 32 համաձայն՝ վարչական վարույթի համար՝ ըստ սույն օրենքի կամ սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական կարգավորումների, եթե այլ բան նախատեսված չէ, գործում է Վարչական դատավարության օրենքը:

Նույն օրենքի § 92 համաձայն՝ Փաստաբանական պալատի համապատասխան շրջանի համար ձևավորվում է փաստաբանական դատարան¹³: Նույն օրենքի § 112c համաձայն՝ քանի դեռ սույն օրենքը այլ դրույթներ դատական վարույթի վերաբերյալ չի պարունակում, գործում են Վարչական դատավարության օրենքի նորմերը համապատասխանաբար: Փաստաբանական դատարանի պալատը հավասար է Բարձրագույն վարչական դատարանի հետ:

Այսպիսով՝ դաշնային փաստաբանական պալատի որոշումների դեմ բերված բողոքները քննվում են վարչական դատավարության կարգով հատուկ փաստաբանական դատարաններում. օրինակ՝ Փաստաբանական դատարանի որոշման դեմ բերված բողոքի թույլատրելիության հարցը փաստաբանական պալատի կողմից կայացված կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման մասով¹⁴, Փաստաբանական արտոնագրի հետ կանչման մասով¹⁵:

(b) Փաստաբանների միության՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի մասնակցությունը հետխորհրդային պետությունների վարչական դատավարությանը

(1) *Ռուսաստանի Դաշնություն*: Ռ-Դ վարչական դատավարության օրենսգրքի (08.03.2015 N 21-Փ3) 1-ին հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով քննում և լուծում է վարչական գործեր ..., այդ թվում՝ պետական կամ այլ հանրային լիազորություններով օժտված առանձին ոչ առևտրային կազմակերպությունների, այդ թվում՝ ինքնակարգավորվող կազմակերպությունների որոշումների, գործողությունների (անգործության) վերաբերյալ գործերը: Ռուսական գրականության մեջ փաստաբանական պալատը դիտարկվում է որպես ինքնակարգավորվող կազմակերպություն¹⁶: Օրինակ՝ հայտնի ռուս պետականագետ ի.գ.դ., պրոֆեսոր Փ. Չիրկինը փաստաբանների պալատը նույնպես դիտում է որպես ինքնակարգավորվող մարմին և նշում է, որ օրենսդիրը նրանց վերապահում է որոշ հանրային գործառնություններ, որոնք քաղաքացիական իրավահարաբերության տարբերակներն իրականացնել չեն կարող: Նրանք ունեն ռեգուլատիվ գործառնության տարրեր, որոնք հիշեցնում են պետական գործառնություններ: Նրանք մշակում են վարքագծի պարտադիր ստանդարտներ, էթիկայի կանոններ, ընդունում են որակավորման քննություններ և տալիս են համապատասխան վկայագրեր, տվյալ ոլորտի համար սահմանում են որոշ ընդհանուր կանոններ: Երբեմն այդպիսի կազմակերպությունները նախատեսում են տվյալ տեսակի գործունեությանը զբաղվողների համար պարտադիր ադամություն: Նրանք օժտված են հանրային իրավունքի իրավաբանական անձի որոշ տարրերով¹⁷:

Ռ-Դ գերագույն դատարանի պլենումը 27.09.2016թ. N 36 որոշմամբ Ռ-Դ վարչ. դատ. օր-ի 1-ին հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի կապակցությամբ նշել է. «Ռ-Դ վարչ. դատ. օր-ի կանոններով չեն քննարկվում փաստաբանի և փաստաբանների պալատի, նոտարի և նոտարական պալատի ... միջև ծագած ներկորպորատիվ վեճերը, որոնք կապված չեն հանրային լիազորությունների իրականացման հետ»: Այս պարզաբանումից բխում է, որ եթե փաստաբանի և փաստաբանների պալատի միջև վեճերը կապված են հանրային լիազորությունների հետ, ապա պետք է քննվեն վարչական դատավարության կարգով:

(2) *Մերձբալթյան երկրներ*: «Փաստաբանության մասին» Եստոնական օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում փաստաբանությունը նիսովում է որպես հանրային իրավական իրավաբանական անձ: Նույն օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ շահագրգիռ անձինք փաստաբանության մարմինների գործողությունները և իրավական ակտերը կարող են բողոքարկել վարչական դատարան¹⁸: «Փաստաբանության մասին» Լիտվային Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Լիտվայի Փաստաբանությունը հանրային իրավաբանական անձ է¹⁹:

(3) *Վրաստանի Հանրապետություն*: «Իրավաբանական օգնության մասին» Վրաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածում նշվում է, որ իրավաբանական օգնության ծառայությունը հանրային իրավունքի իրավաբանական անձ է, ով իր գործունեությունն իրականացնելիս անկախ է²⁰:

(4) *ԱՊՀ՝ այլ պետություններ*: Այն պետություններում, որտեղ Պալատը օրենքով չունի հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ, այդ պետություններում հիմնական հանրային գործառնությո՞ւյն՝ այն փաստաբանի արտոնագրումը, ատեստավորումը վերապահված է արդարադատության նախարարությանը (Տե՛ս «Փաստաբանության մասին» Մոլդովայի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի

¹¹ Օրոգրված են նաև հորային փաստաբանական պալատները:

¹² Ֆրեյդիշ-Լեյսեր, «Դաշնային կարգի փաստաբանության մասին», Մեկվարակցություններ, § 176 «Դաշնային փաստաբանական պալատի դիրքը» (Feuerich/Weyland, Bundesrechtsanwaltsordnung: BRAO 9, Auflage 2016, Rn. 1); տե՛ս նաև Իբլեր, Սամուց/Դյոլդեր, Դիմական օրենքի մեկվարակցություններ, հոդված 86 (Ibler, in: Maunz/Dürig, Grundgesetz-Kommentar, GG Art. 86, Rn. 72, 84, EL August 2018)

¹³ Die Anwaltsgerichte sind staatliche Gerichte - փաստաբանական դատարանները պետական դատարաններ են (Kilimann, in: Feuerich/Weyland, Bundesrechtsanwaltsordnung: BRAO 9, Auflage 2016; Փաստաբանության մասին օրենքի ընդունման հիմնավորումներ (BT-Drs. 3/120, 93)

¹⁴ Դուլիսային Ռեյն Վեստֆալիան հորի փաստաբանական դատական պալատի որոշում (Anwaltsgerichtshof Nordrhein-Westfalen Beschl. v. 03.03.2017, Az.: 2 AGH 14/16)

¹⁵ Ընդունված վարչապետից հորի փաստաբանական դատական պալատի վճիռ (Anwaltsgerichtshof Baden-Württemberg Ur. v. 10.11.2017, Az.: AGH 28/2017 II)

¹⁶ Зинченко С.А., Галов В.В. Саморегулируемые организации в законодательстве России: проблемы и решения // Корпорации и учреждения. Сборник статей. - М.: Статут, 2007. С. 100-102.

¹⁷ Чиркин В. Е. Юридическое лицо публичного права: Ин-т государства и права Российской академ. наук. Москва : Норма, 2014. С. 263.

¹⁸ Журнал "Евразийская адвокатура" // <http://www.eurasian-advocacy.ru/estoniya/1620-zakon-ob-advokature>

¹⁹ Журнал "Евразийская адвокатура" // <http://www.eurasian-advocacy.ru/litva/1621-z-a-k-o-n-litovskoj-respubliki-ot-18-marta-2004-g-ikh-2066-vilnyus-ob-advokature>

²⁰ <https://matsne.gov.ge/ru/document/download/21604/7/ru/pdf>

2-րդ մաս ²¹, «Փաստաբանական գործունեության և իրավաբանական օգնության մասին» 2018թ. Ղազախստանի Հանրապետության օրենքի 39-րդ, 40-րդ հոդվածներ²²):

3. ՀՀ վարչ. դատ. օր-ի 3-րդ հոդվածի ոչ իրավաչափ «մեկնաբանության» հաղթահարումը և վարչական իրավունքի հայ գիտնականների դիրքորոշումը ՓՊ-ի՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի մասին

ՓՊ-ի որպես վարչական դատավարությունում պատասխանող հանդես գալու վերաբերյալ սխալ դատական պրակտիկան պայմանավորված է նաև հայ իրավագիտության մեջ «հանրային իրավունքի իրավաբանական անձանց» հայեցակարգի բացակայությամբ: Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյանը նշում է. «Քանի որ հայրենական իրավական համակարգում դեռևս լիարժեք ներմուծված չէ «հանրային իրավունքի իրավաբանական անձ» հասկացությունը, գերիշխում է այն մտայնությունը, որ գոյություն ունի «իրավաբանական անձ» եզրույթի բացառապես մեկ բնորոշում, որը, ինչպես արդեն նկատեցինք, տրված է քաղաքացիական օրենսդրությամբ, ըստ այդմ էլ՝ ողջ իրավական համակարգի հետագա զարգացումն ընթացել է ոչ իրավաչափ ուղղությամբ՝ առաջացնելով անհարկի շփոթ»²³: Հանրային իրավունքի մեկ այլ մասնագետ՝ իրավունքի դոկտոր Գ. Հովհաննիսյանը (Գերմանիա) նշում է. «Հանրային իրավունքի իրավաբանական անձինք սկզբունքորեն հիմնական իրավունքների սուբյեկտ չեն, որովհետև նրանք հանրային իշխանության (այն է՝ պետության) մի մասն են: Հանրային իրավունքի իրավաբանական անձանց հետևում կանգնած են ոչ թե ֆիզիկական անձինք, այլ միշտ պետությունը, որը չի կարող լինել միաժամանակ հիմնական իրավունքի և՛ սուբյեկտ, և՛ հասցեատեր (այսպես կոչված կոնֆուզիոն փաստարկ): Նրանք գործում են օրենքով սահմանված իրենց իրավասությունների հիման վրա, այլ ոչ թե իրացնում են հիմնական իրավունքներ: Հայկական արդի իրավաբանական գրականության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց վերաբերյալ վերոհիշյալ բացառությունները ցավոք դեռ չեն գիտակցվում»²⁴: Հանրային իրավունքի մասնագետ Ի.գ.թ. Դոցենտ Թ. Շաքարյանը հարցազրույցներից մեկում նշել է, որ Պալատը պետք է համարվի հանրային իրավունքի իրավաբանական անձ²⁵:

III. ՀՀ վարչական դատարանի հայցադիմումը վերահասցեագրելու մասին որոշումը ՀՀ վերաքննիչ վարչական դատարան բողոքարկելու հնարավորության բացակայության սահմանադրականությունը և Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներում ամրագրված իրավունքների անմիջական կիրառումը

ՀՀ վարչ. դատ. օր-ի 81-րդ հոդվածի 1-ին մասը, 127-րդ հոդվածի 10-րդ մասը, 131-րդ հոդվածի 1-ին մասը՝ հայցադիմումը վերահասցեագրելու մասին դատարանի որոշման բողոքարկումն արգելելը (բողոքարկման հնարավորություն չնախատեսելը), հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին և 63-րդ հոդվածի 1-ին մասերին, որոնցով պաշտպանվում են օրենքի հիման վրա նախապես ստեղծված բնական կամ իրավասու դատավորի իրավունքը (օրինական դատարանի իրավունքը) և ենթադրյալը խախտումը ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը (սույն հարցում առկա անորոշությունների պատճառով այս հարցի վերաբերյալ գուգահեռ ներկայացվել է անհատական սահմանադրական դիմում):

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներում ամրագրված մարդու հիմնական իրավունքն անմիջապես գործող իրավունք է, ուստի ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, որպես հանրային իշխանության մարմին, սահմանափակված է այդ իրավունքով, նա պարտավոր է այս վերը լուծել ՀՀ Սահմանադրության նշված նորմերի անմիջական կիրառմամբ:

IV. Հայցվորի պահանջ.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասով, 61-րդ և 63-րդ հոդվածներով՝

Խնդրում եմ

Վերացնել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԳ/1073/05/19 գործով կայացված 22.02.2019թ. որոշումը:

Հայցվոր՝

Արթուր Դամբարյան

²¹ Журнал "Евразийская адвокатура" <http://www.eurasian-advocacy.ru/respublika-moldova/613-zakon-respubliki-moldova-ob-advokature>

²² http://online.zakon.kz/Document/?doc_id=33024087#pos=112;245

²³ Պալատի Դանիելյան Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (սահմանադրության) և իրավական ակտի մեկնաբանության փոխարաբերության արդի հիմնախնդիրները //

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016 № 2 (20), Էջ 14:

²⁴ Գոռ Հովհաննիսյան Հիմնական իրավունքների երրորդային գործողությունը կամ ինչ է ստում մեզ հի սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասը // <https://lex.am/docs/yerrordayin.pdf>

²⁵ <http://www.gotosarmeni.am/article/76688/predmet-obszhdeniya-v-administrativnom-sude?fbclid=IwAR2TbhOD21hBTyOEic8eIO7rOwTgAuDOockbVYEhuB6JZokBdHXAF6qUnck>